[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ]

Իմանալով, որ մի երկու օրով մեկնում եմ գյուղ, լինելու եմ Կիրովականում, Նշան Մուրադյանը խնդրեց մի թղթապանակ տանել, հանձնել Աշոտ Հովհաննիսյանին: Թղթապանակում իր մի աշխատությունն էր՝ նվիրված Միքայել Նալբանդյանին:

Սիրով տարա, նույն օրն էլ հանձնարարությունը կատարեցի, եղա այն փոքրիկ սենյակում, ուր ապրում էր այդ բարձրահասակ մարդը, մինչ թույլտվություն կստանար Երևան տեղափոխվելու: Սիրով ընդունեց, հարց ու փորձով իմացավ ով լինելս, զբաղմունքս ու գյուղ այցելելու առիթը: Երբ փորձեցի հրաժեշտ տալ, հասկացրեց, որ ուզում է մի փոքր ուղեկցել. այդ պահին էլ միտք ծագեց հարգելի աքսորականին հրավիրել տուն, որ Կիրովականից 5 կմ-ի վրա էր. նա հարմար չհամարեց, բայց և իսկույն համաձայնեց, երբ տան փոխարեն այգի առաջարկեցի, որ գյուղի ծայրում էր: Փորձեցի մեքենա վարձել, կանխեց, ցանկություն հայտնելով ոտքով գնալ, որ այդ իր համար կլինի զբոսանք:

Մեր միջև ընթացող զրույցը աննկատ ընդունել էր անկաշկանդ-մտերմիկ բնույթ: Թե ինչ էր առիթը՝ չեմ հիշում, պատմեցի, որ տարիներ առաջ, երբ գտնվում էի նոր կառուցվող Մագնիտոգորսկում որպես պրակտիկանտ, հիշեցի տունը, մայրիկիս, նախազգացի, որ նրա հետ ինչ-որ անախորժ բան է պատահել, նամակ գրեցի, պատասխան ստացա, որ տանն ամեն ինչ կարգին է, բայց երբ վերադարձա, պարզվեց, որ այդ նույն օրը մայրս վառարանի համար փայտ ջարդելիս վնասել է մի աչքը, մյուսը փրկվել է:

Այս պատմությունն անելիս նկատում էի, որ զրուցակիցս թեթև ժպտում է, մինչ դեմքից թախիծը չէր հեռանում: Երբ վերջացրի, ասեց. «հիմա էլ ես պատմեմ»... և պատմեց, թե ինչպես, երբ օրերն անցնում էին հեռուներում, օրերից մի օր իրեն շատ վատ է զգում, ընկնճվում է, մտածելով թե իր վերջը եկել է, ու հանգչելու է հեռուներում, օտարության, մենակության մեջ: Շատ չանցած իրավիճակը փոխվում է, զգացողությունը կարգավորվում: Ժամանակ անց տնից նամակ է ստանում, որ հայրը (թե՞

մայրը – չեմ հիշում) մահացել է, և որ այն նույն օրն ու մոտավորապես նույն ժամին, երբ պատմողը վատ էր զգացել:

Այդ նույն երևույթը, բոլորովին նույն ձևով կրկնվում է մի ուրիշ անգամ, դարձյալ նույն հեռուներում, և այս անգամ իրեն թվում է թե, ինչ լինելու է, իր հետ է կատարվելու: Շատ չանցած առողջական վիճակը նորից է կարգավորվում, ու ժամանակ անց նորից նամակ է ստանում, ու նույն օրը նույն ժամին մահանում է ծնողներից մյուսը:

Մենք երկուստեք հանգեցինք եզրակացության, որ այդ պատահական երևույթ չէ, որ մարդու մեջ որոշ օրգաններ ի վիճակի են հաղորդել և ընդունել նաև մեծ տարածությունների վրա:

Երկուստեք նշեցինք, որ նույն բանը ավելի հաճախ է պատահում փոքր՝ 50-100 մետր տարածության վրա, երբ որևէ անծանոթի նկատելով, թվում է, թե քո այսինչ մոտիկ անձնավորությունն է, բայց ոչ, նա չէ, սակայն բոպեներ անց դեմդ է գալիս նա, ում հիշել էիր մի քիչ առաջ:

Մոտ մեկ ժամ անց մոտեցանք գյուղի եզրին, թեքվեցինք ձախ, մտանք մեր այգին, որ ձգվում էր սարի ստորոտի և Չիչխան գետակի միջև: Օգոստոսին էր, ամռան խնձորի ու տանձի լավ ժամանակը: Մինչ մենք մրգերի տեսակներն էինք փորձում տարբերել, եղբորս կինը, որ գյուղի ուսուցչուհիներից էր, աննկատ հասցրել էր մի փոքրիկ հավ տապակել, համեմունքով ու հացով ու մատուցեց մեծարգո հյուրին: Վերջինս թեպետ հրաժարվելու փորձ չարեց, սակայն նկատելիորեն հուզվեց և որքան էլ փորձեց այդ թաքցնել, չհաջողեց, անկախ նրանից, որ մենք չնկատելու էինք տալիս:

Աշոտ Գարեգինովիչը սեղան-աթոռի չմոտեցավ, ուզեց կանաչ խոտի վրա. գետափին, փոքրիկ սփռոց բացվեց, մեր հյուրը այդ պարզ հյուրասիրությունը ճաշակեց առանց շտապելու, հանգիստ, դանդաղ, մոտ մեկ ժամի տևողությամբ:

Օրը թեքվել էր, ուզեց մոտից տեսնել այգու միջնամասում գտնվող դիմացից բաց այն փոքրիկ տնակը, որտեղ գիշերում էր մայրս ու երբեմն՝ ես: Այդ պահին այդտեղ էր մայրս, որ չիր էր պատրաստում: Ծանոթացրի, ինքնաբերաբար շատ անմիջական զրույց ունեցան: Մայրս պատմում էր, որ Հովհաննիսյանի տարիներին՝ մինչև 1927 թ.,

ինքը լինելով կանանց շարժման ակտիվ մասնակից, մանդատ է ստացել, մեկնել Երևան խորհրդակցության և այդ առիթով էլ գյուղի կանայք իրեն երբեմն Մանդատ են անվանում: Աշոտ Գարեգինովիչը համոզվել էր, որ մայրս պետք է կուսակցական լիներ: Այդտեղ էլ պարզվեց, որ կուսակցության մեջ ընդունվելու նախորդ օրերին իր մի ընկերուհու հետ արորով մտել են գետը «ջուրը վարել», որ երաշտը վերջ ունենա և անձրև գա: Ստացվել էր այնպես, որ իրոք անձրև էր եկել և այդ բանը հայտնի էր դարձել ոչ միայն մեր, այլև հարևան գյուղերում: Այս հանգամանքը նկատի ունենալով երաշխավորողներից մեկը, ապա և երկրորդը հետ էին վերցրել իրենց երաշխավորագրերը և ընդունելությունը տեղի չէր ունեցել, մայրս էլ չէր վշտացել, քանի որ անձրևը բերքը փրկել էր:

Պետք էր ներկա գտնվել, տեսնելու համար, թե Աշոտ Գարեգինովիչը ինչպես սրտառուչ ծիծաղում էր (այդ տարիներին տխրություն տեսած մարդը), նա խոստովանեց, որ չի հիշում, թե մեկ էլ երբ է այդպես անկաշկանդ ծիծաղել:

Նա հետաքրքրվեց, թե օրդեն կամ մեդալ չունի՞. մայրս թե՝ էն ժամանակ աշխատել կար, իսկ այդպիսի բաներ չկային, հիմա է, որ գործ անես-չանես օրդենը կա, պատվոգիրն էլ վրան:

Քաղաք ճանապարհելիս դեռևս այդ զրույցի տպավարորության տակ, պատմում էր, որ Կենտկոմի քարտուղար եղած ժամանակ ոտքով գնում էր գործի և վերադառնում տուն, և ով էլ խնդիր ուներ, ճանապարհին էր հանձնում իր դիմումը, այդտեղ էլ ժամանակ էր որոշվում պատասխան ստանալու համար:

Հարմար համարեցի հապճեպ պատրաստված կտորի փոքրիկ պարկով միրգ վերցնել և իրեն ուղեկցել իր տուն: Մեր հարգելի հյուրը համաձայնվեց միրգը վերցնել, իսկ ուղեկցելը՝ մերժեց:

Իմ խնդրանքով բարեկամս՝ Հայկազ Ափինյանը, որ երկար տարիների ուսուցիչ էր, ամեն շաբաթ, մինչև այգեկութի վերջը, փոքրիկ պարկով միրգ էր տանում Աշոտ Գարեգինովիչին, իսկ սա ամեն անգամ շնորհակալ լինելով, պնդում էր այլևս նեղություն չքաշել:

Երևանում առաջին անգամ հանդիպեցի համալսարանի բակում Հակոբ Մանանդյանի թաղման ժամանակ: Հուղարկավորողները դեռ չէին ցրվել, ինձ նկատելով, առաջարկեց գնալ: Իջանք Աբովյանի ձախ մայթով, այդտեղ էլ հայտնեց իր կարծիքը հանգուցյալի վերաբերյալ, որ մեծ կորուստ էր, մեր ժամանակակից մեծ պատմաբաններից էր, մեզանում՝ ամենամեծը:

1957 թվականին էր, ինչ-որ առիթով շատ ժողովուրդ էր հավաքված, Աշոտ Գարեգինովիչը մոտեցավ և ինձ շնորհավորեց վաստակավոր շինարարի կոչում ստանալու կապակցությամբ, կարդացել էր թերթերում: Մեծ հիասթափությամբ ընդունեց, որ թերթում եղածը մի ուրիշ Մարությանի էր վերաբերում, իսկ երբ 1961 թ. ինձ արժանացրին այդ կոչման, ես անհամար զգացի իրեն հայտնել, որ այս անգամվա Մարությանը ես եմ, ինքն էլ երևի խուսափեց պատահականությամբ երկրորդ անգամ սխալվելուց:

ՏՄ. հունիս, 1987

ք. Երևան